

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎԱՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԲԵՇԱԳՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ավատրիայի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանագրովող կողմեր,
ձգտելով պատշաճ կերպով բավարարել արտաքին առեւտրի պահանջները մասնավորապես երկու երկրների միջեւ,

ձգտելով, ժամանակակից տեխնիկական մակարդակին համապատասխան, կանոնակարգել երկու երկրների միջեւ բեռնափոխադրումները՝ մասնավորապես նպատակ ունենալով բարելավելու շրջակա միջավայրի վիճակը Ավատրիայի Հանրապետությունում եւ Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների առաջացրած աղմուկի ու աղտոտիչ արտանետումների նվազեցման միջոցով,

ձգտելով առավել լայնորեն իրականացնել համակցված ավտոմոբիլային բեռնափոխադրումները եւ խթանել որոշակի ապրանքների, մասնավորապես հեշտ կոտրվող ապրանքների տեղափոխումը առավել արդյունավետ փոփոխելի տրանսպորտով՝ ավտոմոբիլայինից երկաթուղայինի,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ՄԱՍ I. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐԾ

Հոդված 1

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Հայաստանի Հանրապետության եւ Ավատրիայի Հանրապետության միջեւ միջազգային բեռնափոխադրումների (երկում փոխադրում, տարանցիկ փոխադրում, դեպի երրորդ երկիր փոխադրում) նկատմամբ:

2. Սույն Համաձայնագիրը վերաբերում է.

տրանսպորտային փոխադրողների եւ տրանսպորտի տեսակների դեպքում՝

- միջազգային համակցված տրանսպորտին (հողված 2, պարբերություն 1).
- միջազգային ավտոմոբիլային փոխադրամիջոցներին, ինչպես սահմանված է 2-րդ հողվածի 2-րդ պարբերությունում.

- միջազգային վարձակալված կամ անհատույց տրամադրված տրանսպորտին՝ ներառյալ ավտոմոբիլային փոխադրամիջոցի չբեռնավորված վազքը.

- միջազգային սեփական տրանսպորտին՝ ներառյալ ավտոմոբիլային փոխադրամիջոցով չբեռնավորված վազքը:

3. Տրանսպորտի ոլորտի տուրքերից ազատելու հարցը վերապահվելու է Պայմանագրովող կողմերի պետությունների ազգային կանոնակարգմանը եւ չպետք է սահմանափակվի սույն Համաձայնագրով:

ՄԱՍ II. ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՍԱՐՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Հոդված 2

Սույն Համաձայնագրում՝

1. "Համակցված տրանսպորտ" նշանակում է՝ բեռնափոխադրումներ.

ա) ավտոմոբիլային փոխադրամիջոցով մեկնան կետից դեպի ամենամոտ՝ տեխնիկապես հարմար տերմինալ, եթե դա կատարվում է երթեւեկության ու տրանսպորտային տևականության տեսանկյունից ընդունելի հնարավոր ամենակարճ ուղիով եւ համաձայն մայրուղու կանոնակարգերի, եւ բեռնավորման կետընավահանգիստը (տերմինալ)

գտնվում է Երկու պետություններից մեկում (սկզբնական ուղեհատված)։

բ) շարժիչով փոխադրամիջոցի, 2-րդ պարբերությամբ նախատեսված մեկ այլ փոխադրամիջոցի կամ դրա փոխադրինվող թափքի, կամ առևսվազն 6 մետր Երկարությամբ բեռնարկող մեջ (բեռնարկղային տրանսպորտ), Երկաթուղով կամ նավով բեռնման կետից/նավահանգստից դեպի բեռնաթափման կետ/նավահանգիստ, որի դեպքում պետք է հատվի Պայմանագրովող կողմերի Երկու պետությունների կամ դրանցից մեկի սահմանը, եւ

գ) ավտոմոբիլային փոխադրամիջոցով տեխնիկապես հարմար տերմինալից դեպի բեռն ստացողը, եթե դա կատարվում է Երթեւեկության եւ տրանսպորտային տնտեսության տեսանկյունից ընդունելի՝ հարավոր ամենակարճ ուղիով եւ համաձայն մայրուղու կանոնակարգերի, եւ բեռնաթափման կետը/նավահանգիստը (տերմինալ) գտնվում է Երկու պետություններից մեկում (տերմինալային ուղեհատված)։

2. "Փոխադրամիջոց" նշանակում Ե՝

բեռնափոխադրման համար նախատեսված՝ շարժիչով ցանկացած փոխադրամիջոց՝ ներայալ բեռնատարները, կիսակցասայլով փոխադրամիջոցները, ճանապարհային գնացքները, կցորդները, կիսակցորդները։

3. "Վարձակալված կամ անհատույց տրամադրված տրանսպորտ" նշանակում Ե՝

բեռնափոխադրումներ այնպիսի փոխադրամիջոցներով, որոնք գործում են անկախ, կանոնավոր եւ հետապնդում են շահույթ կամ այլ տնտեսական շահ։

4. "Սեփական տրանսպորտ" նշանակում Ե՝

փոխադրամիջոցներով իրականացվող բեռնափոխադրումներ, եթե բավարարվել են հետեւյալ պայմանները։

ա) փոխադրվող ապրանքները պետք է լինեն ձեռնարկության սեփականությունը, կամ դրանք պետք է լինեն ձեռնարկության կողմից վաճառված, գնված, վարձակալված, լիզինգային հիմունքներով ստացված, արտադրված, ձեռք բերված, մշակված կամ կատարելագործված։

բ) տրանսպորտը պետք է ծառայի ապրանքները ձեռնարկություն բերելու, ձեռնարկությունից դուրս հանելու կամ, ելնելով իր կարիքներից, փոխադրումը ձեռնարկության ներսում կամ դրանց դուրս։

գ) տրանսպորտի համար օգտագործվող փոխադրամիջոցները պետք է վարվեն ձեռնարկության աշխատակիցներ համարվող վարողուների կողմից։

դ) բեռնափոխադրում իրականացնող փոխադրամիջոցները պետք է պատկանեն ձեռնարկությանը կամ պետք է ձեռնարկության կողմից գնված լինեն Երկարաժամկետ պայմանագրով կամ լինեն լիզինգային հիմունքներով վերցված։

ե) փոխադրումը պետք է իրենից ներկայացնի ձեռնարկության ընդհանուր գործունեության շրջանակներում կատարվող օժանդակ գործունեություն։

5. "Կարոտած" նշանակում Ե՝

Պայմանագրովող կողմերից որեւէ մեկի տարածքում ապրանքների բարձումը տրանսպորտային միջոցի վրա՝ այդ պետության տարածքով փոխադրումներ իրականացնելու համար։

ԱՂՍ III. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԲԵՐՆԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

3. Հոդված 3

Փոխադրումներ, որոնց համար պահանջվում է թույլտվություն

1. 1-ին հոդվածում նշված փոխադրամիջոցների համար, եթե դրանք կապված են ավտոմոբիլային փոխադրումների հետ, պահանջվում է այն պետության կողմից տրված թույլտվությունը, որի տարածքում իրականացվելու են ավտոմոբիլային փոխադրումները։

2. Թույլտվությունը տրվում է Զվոտայի մասին համաձայնագրի շրջանակներում, 8-րդ հոդվածի համաձայն, որպես մեկանգամյա թույլտվություն, օրինակ՝

ա) համընդիանուր թույլտվություն (որը Վավերական է երկողմ, տարանցիկ եւ դեպի երրորդ երկիր փոխադրումների համար՝ պայմանով, որ այդ երրորդ երկիր տրանսպորտային միջոցներն անցնելու են այն պետության տարածքով, որում գրանցված է փոխադրամիջոցը).

բ) սահմանափակ թույլտվություններ (այսինքն՝ տեղական, բեռների որոշակի տեսակների, որոշակի փոխադրամիջոցների կամ՝ կախված տրանսպորտի տեսակից):

Հոդված 4

Փոխադրումներ, որոնց համար չի պահանջվում թույլտվություն

1. Թույլտվություն չի պահանջվում հետեւյալ դեպքերի համար.

ա) դեպի օդանավակայան եւ հակառակ ուղղությամբ հաճախակի բեռնափոխադրումներ՝ այս դեպքերում, երբ ներգրավված են օդային ծառայությունները.

բ) ուղենորատար փոխադրամիջոցների վրա կցասայլերով ուղերեաի տեղափոխման դեպքում եւ ցանկացած տիպի մեքենայով դեպի օդանավակայան եւ հակառակ ուղղությամբ ուղերեաի տեղափոխում.

գ) փոստի փոխադրում.

դ) վնասված կամ վերանորոգման կարիք ունեցող փոխադրամիջոցների փոխադրում.

ե) ծերբազատվելու նպատակով կենդանիների մարմինների տեղափոխում.

զ) մեղուների կամ մանրաձկան փոխադրում.

է) հուղարկավորման նպատակով փոխադրում.

ը) փոխադրամիջոցներով բեռների փոխադրում, որի ընդհանուր թույլատրելի բեռնման քաշը, ներառյալ կցասայլերը, չի գերազանցում 6 տոննան, կամ որի թույլատրելի օգտակար բեռնվածությունը, ներառյալ կցասայլերը, չի գերազանցում 3,5 տոննան.

թ) արտակարգ իրավիճակների համար անհրաժեշտ բեռնափոխադրումներ, մասնավորապես, բնական աղետներին եւ մարդասիրական օգնություններին արձագանքելու դեպքում.

ժ) հատուկ մեքենաներով արժեքավոր բեռների (թանկարժեք մետաղներ) տեղափոխում.

ժա) ծովային եւ ներքին ջրային ուղիների նավերի ու ինքնաթիռների համար պահեստամասերի փոխադրում.

ժը) չբեռնավորված այս փոխադրամիջոցի երթի համար, որն ուղարկվել է փոխարինելու փոխադրամիջոցի գրանցման վայրից տարբերվող այլ պետությունում գտնվող՝ անսարքություն ունեցող փոխադրամիջոցին, ինչպես նաև փոխարինված փոխադրամիջոցով փոխադրումը շարունակելու դեպքում՝ անսարք վիճակում գտնվող փոխադրամիջոցի համար տրամադրված թույլտվության հիման վրա.

ժզ) տունավաճառների եւ ցուցահանդեսների համար արվեստի աշխատանքների եւ առարկաների փոխադրում.

ժո) գովազդի կամ ուսուցողական նպատակներով ապրանքների հաճախակի փոխադրում.

ժե) սարքավորումների, հարմարանքների եւ կենդանիների փոխադրում թատերական, երաժշտական, սպորտային միջոցառումներ, կին կամ կրկես, ցուցահանդեսներ կամ տոնավաճառներ, ինչպես նաև ռադիոհայետագրությունների կամ ֆիլմերի եւ հեռուստատեսային թողարկումների համար եւ հակառակ ուղղությամբ.

ժզ) մասնավոր դեպքերում անբաժանելի իրերի փոխադրման ժամանակ, որը կատարվում է ավտոմոբիլային փոխադրամիջոցով, եւ որի կապակցությամբ անհատական ուղենորության համար, համապատասխան ազգային կանոնակարգերի համաձայն, տրվել է բացառիկ թույլտվություն:

2. Համատեղ հանձնաժողովի շրջանակներում (հոդված 10) Պայմանավորվող կողմերը կարող են համաձայնել, որ որոշակի կամ բոլոր բեռների փոխադրումը, որը կատարվում

Ե հատուկ երթուղով, ազատվի թույլտվության պահանջներից:

3. Փոխադրողը պետք է ապացուցի, որ ազատված չբեռնավորված երթերը կատարվում են համաձայն 1-ին եւ 2-րդ պարբերություններում նշված փոխադրման: Ըստ 1-ին եւ 2-րդ պարբերությունների ազատված փոխադրման հետ կապված՝ չբեռնավորված երթն ապացուցվում է բեռնագրի միջոցով, կամ ներկայացնելով եւ այնուհետեւ հետ ստանալով քվոտային թույլտվությունը:

Հոդված 5

Թույլտվության բովանդակությունը

1. Չնայած 4-րդ հոդվածի դրույթներին՝ շարժիչով յուրաքանչյուր փոխադրամիջոցի համար պետք է տրամադրվի թույլտվություն:

2. Թույլտվությունը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները.

ա) տրանսպորտային ծեռնարկության անվանումը եւ հասցեն.

բ) մերենայի պետհամարանիշը.

գ) փոխադրամիջոցի առավելագույն թույլատրելի բեռնվածությունը եւ ընդհանուր թույլատրելի բեռնման քաշը.

դ) տրանսպորտի տեսակը (վարձակալված եւ անհատուց տրամադրված, սեփական տրանսպորտ, չբեռնավորված երթ).

ե) օգտագործման համար հատուկ պահանջները եւ պայմանները, եթե դրանք կիրառելի են.

զ) վավերականության ժամկետը:

3. Թույլտվությունը բացառապես պետք է վերաբերի այն փոխադրողին, որի անունով տրվել է. այն փոխանցելի չէ:

4. Թույլտվության ծեւը պետության Պայմանավորվող կողմերից մեկը պետք է ուղարկի մյուս պետության Պայմանավորվող կողմին, որը պետք է այն լրացնի, բացառությամբ 2-րդ պարբերության "բ", "գ" եւ "դ" ենթապարբերություններում նշված տեղեկության, եւ դրանք տրամադրի համապատասխան փոխադրողներին: 2-րդ պարբերության "բ", "գ" եւ "դ" պարբերություններում նշված համապատասխան տեղեկությունը պետք է լրացվի փոխադրողի կողմից՝ նախքան երթի մեկնարկը:

5. Լրացված թույլտվությունը պետք է պահվի փոխադրամիջոցի մեջ բոլոր երթերի ժամանակ եւ պետք է պահանջի դեպքում ներկայացվի ստուգող մարմիններին:

6. Նամատեղ հանձնաժողովը (հոդված 10) պետք է սահմանի ծեւը եւ այն լեզուները, որոնցով պետք է տրամադրվի թույլտվությունը՝ հաշվի առնելով 2-րդ պարբերության դրույթները:

Հոդված 6

Կաբոտաժի բացառումը

1. Նիմնականում կիրառվում է կաբոտաժի փոխադարձ արգելումը:

2. Միայն համակցված տրանսպորտի սկզբնական եւ վերջնական ուղեհատվածի դեպքում կարելի է փոխադարձ հիմունքներով համաձայնել, որ կատարվեն որոշակի քանակությամբ կաբոտաժային երթեր:

Հոդված 7

Պատժամիջոցները

1. Այլ պետության տարածքում փոխադրողները եւ նրանց անձնակազմը, որոնք գտնվում են պետություններից որեւէ մեկի տարածքում, պետք է պահպանեն սույն Համաձայնագրի դրույթները եւ մյուս պետության տարածքում գործող ընդհանուր դրույթները, որոնք մասնավորապես վերաբերում են տրանսպորտին եւ երթեւեկությանը, ինչպես նաև՝ համապատասխան մաքսային եւ սակագնային դրույթները:

2. Տրանսպորտային օպերատորի կամ նրա անձնակազմի կողմից մյուս պետության տարածքում 1-ին պարբերության դրույթների կոպիտ եւ կրկնվող խախտումների դեպքում այն Պայմանավորվող կողմը, որտեղ լիցենզավորվել է փոխադրամիջոցը, կարող է, այն Պայմանավորվող կողմի խնդրանքով, որտեղ տեղի է ունեցել խախտումը, ձեռնարկել հետեւյալ միջոցները.

ա) նախազգուշացնել տրանսպորտային օպերատորին, որ նա պահպանի 1-ին պարբերության դրույթները.

բ) ժամանակավորապես կասեցնել տրանսպորտային օպերատորի՝ միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումներ իրականացնելու թույլտվությունը՝ սույն Համաձայնագրի հիմքերով.

գ) դադարեցնել տրանսպորտային օպերատորին թույլտվության տրամադրումը եւ չեղյալ համարել արդեն իսկ տրված ցանկացած լիցենզիա մյուս պետության Պայմանավորվող կողմի սահմանած ժամանակահատվածում:

3. Պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ սույն Համաձայնագրի դրույթները շարունակաբար խախտող տրանսպորտային օպերատորներին տրամադրված թույլտվությունները չպետք է ճանաչվեն:

4. Պայմանավորվող կողմերը պետք է միմյանց տեղեկացնեն սույն Համաձայնագրի ցանկացած խախտման եւ 2-րդ պարբերության համաձայն ձեռնարկված միջոցների մասին:

Յոդված 8

Թվոտաները

1. Թույլտվությունների (քվոտա) թիվը, վավերականությունը, ժամկետը եւ առձեռն հանձնման պարբերականությունը պետք է համաձայնեցվի Համատեղ հանձնաժողովի (հոդված 10) կողմից, 12 ամսվա համար (քվոտայի ժամանակահատված), հաշվի առնելով նախարանում նշված սկզբունքներն ու չափորոշիչները:

2. Թույլտվությունները գործում են մեկ արտագնա եւ մեկ վերադարձով ուղեւորության համար: Թույլտվությունը վավերական է միայն քվոտայի ժամանակահատվածի եւ այս ժամանակահատվածին հաջորդող ամսվա համար, եթե Համատեղ հանձնաժողովի (հոդված 10) շրջանակներում այլ ընթացակարգ սահմանված չէ:

Յոդված 9

Տրանսպորտային միջոցների համար սահմանված հատուկ պահանջները

Ելնելով շրջակա միջավայրի պաշտպանության նկատառումներից՝ շրջակա միջավայրի համար բարենպաստ փոխադրամիջոցները, ժամանակակից տեխնիկական մակարդակին համապատասխան, պետք է օգտագործվեն առաջին իսկ հնարավորության դեպքում: Համատեղ հանձնաժողովը (հոդված 10) պետք է առաջարկներ պատրաստի այսպիսի մեթենաների օգտագործումը խթանելու վերաբերյալ:

ՄԱՍ IV. ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆՎՈՂՈՎԸ

Հոդված 10

1. Պայմանագրով կողմերն ստեղծում են Համատեղ հանձնաժողով սույն Համաձայնագրի կատարման, ինչպես նաև արբիտրաժի նպատակով՝ սույն Համաձայնագրի կիրառումից կամ մեկնաբանումից ծագած ցանկացած վեճի դեպքում:

2. Համատեղ հանձնաժողովը հրավիրվում է Պայմանագրով կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով:

3. Վարչական ոլորտներին առնչվող խնդիրներ քննարկելիս Համատեղ հանձնաժողովը կարող է խորհրդակցել իրավասու իշխանությունների ներկայացուցիչների հետ:

ՄԱՍ V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 11

Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագրին ուժի մեջ է մտնում վերջին հայտագիրն ստանալու օրվանից, որով Պայմանագրով կողմերը միմյանց տեղեկացնում են Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

Հոդված 12

Համաձայնագրի տեւողությունը

Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով: Այն ինքնաբերաբար կերկարածվի հետագա հինգ տարիների համար, եթե նախնական ժամկետի ավարտից առնվազն վեց ամս առաջ գրավոր չդադարեցվի Պայմանագրով կողմերից մեկի կողմից:

Կատարված է Երեւանում 2009 թվականի հունիսի 29-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, գերմաներեն եւ անգլերեն, ընդ որում՝ բոլոր երեք տեքստերն ել հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարածայնության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2009 թ. հոկտեմբերի 4-ին: